

56. ԸՍԿԻ՛ ԶԱՎՏԸՆԱՍ

Մեր մե՛ չելներ-մտներ, նստեր-կաներ, ուր տղին կըսեր.

— Քու շար տանիմ, իմ հոգին քու հոգու փոխան. աստված զիմ հոգին քու չառջեն առնե:

Տղեն ըսեց.

«Ես պտի փորձիմ, տեսնամ իմ մամն ի՛մալ զուր հոգին իմ հոգու փոխան կիտա»:

Ճետ մե կը լպոկե՛, կը դնե ձավրի փեթկի մեջ, զուր տեղ կը թալե փեթկի չառջե, խստու կը հիվընդնա ու ծանտր-ծանտր կը տքա:

Մամ կը շոքի տզի կշտին ու էլման կըսե.

— Քու շար տանիմ, իմ հոգին քու հոգու փոխան:

Տղեն գողտուկ զփեթկի ծործկալ կը բանա, լպոկուկ ճետ կը թոնա ի դուս. մամ զայլաքուշտ կէղնի:

— Մա՛մո,— կըսե տղեն,— հոգեառն էկաւ, դե տուր ղհոգիդի իմ հոգու փոխան:

Մամ կը փախնի մեկ դեն:

— Յա՛ման,— կըսե,— հիվանդ է՛դի է, ես չիմ, հիվանդն է՛դի է:

Տղեն կը ծիծղա, գելնա նստի:

— Մա՛մո,— կըսե,— չէ՞ դու զքու հոգին կիտեր իմ հոգու փոխա՛ն, չո՛ւր է, ըպա չորի՞ն չը տվիր:

— Ի՛մալ էնիմ, լա՛ո, ախր ջան քաղցր է: Էն օր կըսե՛ «Իմ հոգին կիտամ քու հոգու փոխան», ըսկի՛ շավտընա՛ս:

¹ Փետրեկ (Մ. Բ.):